

Ա. Մուրզալյան

ՄԻ ԽՈՒՄԲ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԵՎ ԹՈՋՈՒՆՆԵՐԻ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Դեռևս վայրենության միջիծ աստիճանին, ինչպես ցույց է տալիս էնդելսը¹, որսի միսը դառնում է վայրենու սննդի մի պատահական հավելում², երբ նա դառնում է առաջին զենքը՝ դաճանակն ու նիզակը: Վայրենության վերին աստիճանը, սակայն, սկսվում է աղեղի և նետի գյուտով, որով որսի միսը դառնում է մշտական սննդամիջոց, իսկ որսորդությունը՝ աշխատանքի նորմալ ճյուղերից մեկը: Այնուհետև բարբարոսության միջին աստիճանն արևելքում սկսվում է ընտանի կենդանիների ընտելացումով: Հացահատիկների մշակությունն այստեղ, որ ավելի քան հավանական է, ամենից առաջ ծագել է անասուններին կեր հասցնելու կարիքից և հետագայում միայն կարևոր է դարձել մարդկային սննդի համար: Բարբարոսության վերին աստիճանին ամենից առաջ երևում է անասուններ լծած երկաթե գութանը, որ հնարավոր է դարձնում երկրագործության ավելի բարձր աստիճանը՝ դաշտամշակությունը:

Այստեղից պարզ է, որ մարդկության վաղագույն դրադմունքներից էր որսորդությունը: Որսորդությունն ու ձկնորսությունը, — ասում է էնգելսը³, — կանխադրում են մի շրջան, երբ բուսականության հետ միասին կանախ մսակերություն... Մսակերության հետևանքը լինում է երկու վճռական նշանակություն ունեցող առաջադիմություն — կրակի օգտագործումը և կենդանիների ընտելացումը: Այնուհետև կենդանիների ընտելացմանը զուգակցում է հողագործությունը: Իսկ կենդանիների (ինչպես նաև՝ թռչունների) անունները, բնականաբար, չմեծ մասամբ պետք է կապված լինեն մարդկային այդ վաղագույն գրադմունքի հետ:

Այս տեսակետից իրավացի է ակադ. Ի. Զավախիշվիլին, երբ նա իր հայտնի աշխատություններից մեկում⁴ վրաց ու քարթվելական լեզուների

¹ Ֆրիդրիխ Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը (Լ. Կուլտուրայի նախապատմական աստիճաններ), հայերեն թարգմ.,

² Վայրենության օթորին աստիճանին իբրև սնունդ ծառայում էին պտուղները, բնկույզները և արմատները: այդ շրջանի գլխավոր հետևանքը հողաբաժան լեզվի մշակումն է (Վ. Էնգելս, ն. տ.): «...Աշխատանքի զարգացումն անհրաժեշտաբար նպաստում է հասարակության շեղաներին ավելի սերտորեն կապվելու իրար հետ... և այս համագործակցության օգտակարության գիտակցությունը յուրաքանչյուրի համար պարզ է դառնում: Կարճ ասած՝ ձևավորվող մարդիկ հասնում են այն կետին, որ կարիք են զգում մի քան ասելու իրար... և բերանի օրգանները հետզհետե վարժվում են հողաբաշխ ընչույններն իրար հետևից արտաբերել» (Ֆր. Էնգելս, Բնության գիտելիքի, հայերեն թարգմ., 1936, էջ 82):

³ Ֆր. Էնգելս, Բնության գիտելիքի, հայերեն թարգմ., 1936, Երևան, էջ 85 և 86:

⁴ Իվ. Զավախիշվիլի, Վրաց և կովկասյան լեզուների ամենապարզապես բնույթն ու ազգակցությունը, 1937, Թբիլիսի (վրաց լեզվով):

աղղակցությունը հյուս. կովկասյան լեզուների հետ պարզելիս քննության է տոնում մի շարք կենդանիների անունները և նրանց կառուցվածքը քերականական սեռի ու դասի տեսակետից:

Կովկասյան լեզուներում պահպանված մի շարք կենդանիների անունները գտնվում են նաև հայերենի մեջ. սա ևս ցույց է տալիս, որ հայերենը վաղագույն շրջաններում որոշակի շփումների, ներթափանցումների ու խաչավորումների ուժեղ պրոցես է ապրել ընդհանրապես կովկասյան, մասնավորապես քարթվելական լեզուների հետ, նրանց ձևավորման ընթացքում:

Այժմ տեսնենք այն կենդանիների և թռչունների անունները, որոնք անմիջապես կապվում են հայերեն համապատասխան անունների հետ և ծագումով նույնն են, անշուշտ, դալով նախորդ՝ նրանց նախատիպ, բաղմամբով լեզուներից:

Ա.

Քարթվել. ցիկ-աւն-ի || քիկ-աւն-ի || տիկ-աւն-ի || բա-տիկ-ի || բա-տկ-ի || բա-տկ-աւն-ի || վա-ցիկ-ի (<վա-ցի) և այլ նման բառաձևերում, ինչպես ցույց է տալիս ակադ. Իվ. Ջավախիշվիլին իր հիշյալ գրքում, բառարմատն է տիկ (|| թիկ || ցիկ) || տկ, վերջամասնիկն է՝ -աւն (որ ընդհանուր է հյ. -աւն բառաստեղծական մասնիկի հետ) և նախամասնիկները՝ բա- և վա-, որոնք, ըստ ակադ. Ջավախիշվիլու, քերականական սեռի նշաններն են (բա-՝ անսփանջանալի, իսկ վա-՝ արական սեռի): Այս տիկ- (թիկ- || ցիկ-) || տկ- բառարմատները նույնն են հյ. տիկ || տկ- (օր.՝ տկ-նօր) բառարմատների հետ:

¹ Մանրամասն տես իմ հոդվածում՝ «Հայ-վրացական բառային դուադիպումները», քիկ բառի տակ, Սրեանի Պետ. Համալսարանի Ն. Մառի անվան կարիքների աշխատություններ, № 2, 1947, էջ 78—80: Այս քիկ և քկ-նօր (<ժիկ-նօր) բառաձևերն իրարից տարբերվում են -նօր մասնիկով, որ, անշուշտ, նվազա-փաղարշական մասնիկ է (տկնօր բառը քիկ բառի համեմատությամբ նվազա-փաղարշական է): -նօր մասնիկն, անշուշտ, բաղադրյալ է (այժմ արդեն քարացած) և կազմված է իմ կարծիքով, -ն+նօր <ժ-նւն+նօր պարզ մասնիկների բաղադրումից (-նօր մասնիկը շատ հաղագույն է պատահում հմմտ. անգլ. -նօր-նի բառից, կիւ-նօր-նի <ժիւ-նօր-նի գոթերից բաղից և այլն): ժ-նւն+նօր բաղադրյալ մասնիկից -նւն պարզ ժանցը (հմմտ. պարկ → պարկ-նւն) մի ժամանակ նվազա-փաղարշական դադափար լինելով և արտահայտելով նաև հայերենում ինչպես երեւում է վրաց սր շարք բառաձևերից, ինչպես օր.՝ վրց. կեկալ-ի բռնկույթ բառից կա կեկալ-նւն+ն բռնկույթի, տիկի, պնդուկ, զոզը-ն բողբոջ բառից՝ զոզը-նւն+ն բողբոջի, փոքրիկ դուռն, զիւն-ի գոյան, գոյապիս բառից՝ զիւն-նւն+ն գոյապիսի (ծագրական իմաստով) և այլն: Այստեղ՝ վրաց բառաձևերում՝ -նւն մասնիկին բաղադրված է -ա կրկին նվազա-փաղարշական մասնիկը, որ ենթադրվում է -աի բնահանուր նվազա-փաղարշական մասնիկի հնչյունափոխությունից ստացված (կ հնչյունի անկումով): Այս -ա (<ժ-ակ) մասնիկը վրացերենում հանդես է գալիս նաև այլ, ինչպես օր.՝ -նւկ, -նւկ նվազա-փաղարշական մասնիկներին բաղադրված ձևով, այսպես օր.՝ վրց. ցիւն-ի ձիւ բառից ցիւն-նւկ+ն գոյապիսի ձիւ (հմմտ. նաև առանց -ա մասնիկի բաղադրման՝ բուր-նւկ-ի բռնիկ, փշիկ): Խիս հոթիս բառից՝ Խիս-նւն+ն հոթիսի, հատուկ անուններից՝ Ան-նւկ+ն անիկ, կեց-ի ձմարդ բառից՝ կեց-նւն+ն ձմարդուկ, բազ-վ-ի ձուկ բառից՝ բազ-նւն+ն ձկնիկ, հատուկ անուններից՝ Պապ-նւն+ն Պապիկ, և այլն: Այսպիսով, բնական է, որ վրց. -նւն+ն մասնիկը (մի շարք բառաձևերում) բաղադրյալ է՝ կազմված լինելով -նւն և -ա (<ժ-ակ) պարզ մասնիկներից, որոնք արտահայտում են նվազա-փաղարշական դադափար: Այս -նւն մասնիկը նույնը պետք է լինի հյ. տկ-նօր բառաձևի մեջ -ն+նօր <ժ-նւն+նօր բաղադրյալ նվազա-փաղարշական -նւն մասնիկի հետ: Մնում է այստեղ -նօր (ա. -ն+նօր <ժ-նւն+նօր) մասնիկը, որը նմանապես երբեմնի նվազա-փաղարշական մասնիկը պետք է լինի:

կովկասյան բառաձևերն ունեն տարրեր նշանակութուններ, ինչպես օր.¹ «այծ, ուլ, ոչխար, զառ...»։ Սրանք յուրահատուկ ձևով պահպանված են ինչպես քարթվելական (հարավային կովկասյան), այնպես էլ հյուսիսային կովկասյան լեզուներում։ այսպես օր.¹ չերքեղերենում էլ տեկի-ոխո նշանակում է «արու ոչխար կամ այծ», որի առաջին մասը՝ տեկի «այծ կամ ոչխար» է, ընդհանրապես (իսկ երկրորդ մասը՝ ոխո և խու «արու» է նշանակում)։ այս տեկի բառը տիգ ձևով պահպանված է չաչնեոեն-քիստեբեն-ծովերենի ատ-տիգ «հայր» բառաձևի մեջ, որ նախապես յա-տե-կի յա-տիկ-ի «էդ կենդանի», իսկ վա-տիկ-ի «արու կենդանի» ձևով է եղել։

Այս նույն տիկ և տիգ բառարմատը գտնվում է նաև այսպես կոչված հնդեվրոպական լեզուներում, ինչպես օր.¹ diga, Ziga, «այծ», Zicki, «ուլ», Zige, Ziege «այծ», ticcen «այծիկ, ուլ...» և այլն (տես «Արմ. բառ.» տիկ բառի տակ)։ Արդյոք հնդեվրոպական է հյ. տիկ բառը, ինչպես համարում է պրոֆ. Աճառյանը («Արմ. բառ.»), իհարկե, ոչ։ Կասկածից դուրս է, որ սա տեղական բառերից է և այստեղից կարող է անցած լինել հնդեվրոպական լեզուներին։

Բ.

Դարթվել. լեզուների կենդանի նշանակող մի շարք բառաձևերում, ինչպես ցույց է տալիս աղագ. Բ. Ջավախիշվիլին իր հիշյալ զրքում, պահպանված է զու- (|| զվ-) || զո- || զա- || զ- «ծին, ծնունդ» (ինչպես նաև՝ «էդ, ծնող») բառարմատը, ինչպես օր.¹ հին վրց. ցն-զվ-ի «էդ», զու-երա «կենդանու ծին», մե-ե-զվ-ն «ծնող», ու-զվ-ի «վիժած անասուն», ինզուլոյերեն զո-բա «ծին, ծնել», խեփսուերեն օտ-զվ-եր-ի «ծնող անասուն», սվան. լի-զ-ալ կամ լի-զվ-ել «կենդանու ծին», ճան. բո-զո «էդ՝ աղջիկ (ծնունդը)»։ Այս զու բառարմատի փոփոխակն է ձու «էդ», որից՝ վրց. ձու և ձու-վ-ի «էդ կենդանի» և ձու-կթա «էդ շուն» (որի հետ պետք է կապել հյ. ձու «հավկիթ» բառը, տես՝ իմ «Հայ-վրացական բառային զուգադիպումները» ձու բառի տակ, էջ 66, Երևանի Պետ. Համալս. Ն. Մատի անվան կարինետի աշխատություններ, № 2, 1947)։

Նույն զու «ծին» բառարմատից է նաև վրց. մո-զու-եր-ի «մի տարեկանից ափելի եզացու» = զուղամազ՝ րերեն մա-զվ-եր-ի = ճան. մու-զա-ր-ի մո-զա-ր-ի «էդ հորթ, կովացու»։ սրանց հետ պետք է կապել նաև հյ. մո-զի «հորթ» բառը՝ իմաստի որոշ երանգավորումով [պրոֆ. Աճառյանը, «Արմ. բառ.», հայերենը համարում է հնդեվրոպական mezh'ho- ձևից ծագած և վրացերենը՝ հայերենից փոխառյալ]։ Այս զու բառարմատի հետ պետք է կապել նաև վրց. զու-ար-ակ-ի = հյ. զու-ար-ակ (տ. իմ «Հայ-վրացական բառային զուգադիպումները» զուարակ և մոզի բառերի տակ, էջ 43—47, 68)։

Այս զու և զ բառարմատի հետ պետք է կապել նաև հյ. ե-զ-ն «եդ կենդանին» բառը, որ պրոֆ. Աճառյանը («Արմ. բառ.») համարում է «բնիկ հայ բառ»՝ հնի. մտացածին eg'h ձևից հանելով և հիմնվելով Հյուրշմանի կողմից իրավացիորեն մերժված Մեյերի ասածի վրա՝ ասում է «մյուս լեզուներից ունենք միայն սանս. ahi, զնդ. azi «երեք տարեկան կով» բառերը, որը հենց նույն պրոֆ. Աճառյանի վկայությամբ Հյուրշմանը (YF Anz. իր քերականության հավելվածում) չի ընդունում՝ պատճառաբանե-

լով թե սասս. ձևը անստույգ է, իսկ զնդ. բառը իբրև վերադիր է գործածված եկով՝ բառին՝ «կաթնատու» կամ ուրիշ մերձավոր մի նշանակություն մը (եկրմ. բառ. 11 հ. էջ 657): Եվ իդուր է Մեյեն (ներա հետ նաև պրոֆ. Աճառյանը) մերժում Բուզգեի ճիշտ համեմատությունները՝ թուշ. ase, շեշեն. ēsi, սեռ. esin «հորթ», ուտ. uz «եղ», nuzr «եզներ», կայ. դիդ. uns, us, is, արճ. az «եղ», տարաս. unpza, հյուրրկան. unnc, լեզգ. os, is, վոտյ. aš, սիրյ. օš... արխադ. ac ելն, ելն (եկրմ. բառ. 11 հ. էջ 656), որոնք՝ բոլորն էլ կապվում են, անշուշտ, զու- || զա- || զա- || զ- բառարմատի հետ:

Գ.

Բարթվել. կուար || կուեր «ձագ, որդի» բառարմատը, որ, ինչպես ցույց է տալիս ակադ. Իվ. Ջավախիշվիլի, պահպանված է մի շարք բառաձևերում, ինչպես օր.՝ վրց. բո-կուեր-ի «կենդանու ձագ», դիա-կեուլ-ի || ռե-կեուլ-ի «կենդանու էգ ձագ», րարե-կեուլ-ի «կենդանու ձագ», սվան. փե-կվնա «լակոտ», փի-կու «կրտած այծ» < փի-կուար-ի և լե-փկուար-ի «կրտելու այծ»... Սրանց արմատն է՝ կվար < կուար «ձագ, որդի»¹, որի հետ ես կապում եմ հյ. կոր-իւն «լակոտ, քոթոթ» (ինչպես նաև՝ «առյուծի ձագ»), կոր-ն-ակ «պստի լակոտ» և այլն (տես իմ «Հայ-վրացական բառային զուգահեռություններ» կոր-իւն բառի տակ, էջ 61-63, Երևանի Պետ. Համալսարանի Ն. Մառի անվան կարիքների աշխատություններ, № 2, 1947):

Դ.

Ինչպես ցույց է տալիս Իվ. Ջավախիշվիլին մեզր. հրջի «արու (ոչխար)» (օր.՝ շխուրի հրջի «ոչխար արու») բառը՝ վրց. վերնի «արու ոչխար» բառի հետ համեմատած՝ սկզբում վ- մասնիկը չունի (որ մի ժամանակ արական սեռի զագափար է արտահայտել վրացերենում), հա նաև մեզր. հրիձի «էգ խոշոր եղջերավոր կենդանի», ինչպես նաև օրիջի || օրիձի «առվար, անասուն», իսկ օրջի «կով»: Պարզ է, որ սրանք՝ օրիջի և օրջի միևնույն բառերն են: Սրանց սեռային տարբերակումը հետագայի արդյունքը պետք է լինի՝ նախապես ընդհանուր նշանակություն ունենալով:

Օր.՝ ճան. դօրինա նշանակում է «Սաղմնավորել, ծնել, ստեղծել»... մեզր. րինա «դոյանալ» բառից է մա-րննջի «գոյացող, հղող», նա-րննջի || նա-րինջի «գոյակ, էակ» և օ-րննջի «գոյացող». բոլորն էլ կապված են «գոյանալ, գոյակ» (որից և, հետևապես, «կենդանի») իմաստի հետ:

1) Եստ հետաքրքրական է, որ այս եմար. կուար «ձագ, որդի» բառը որոշ հնչյունափոխությամբ (վերջի «հնչյունի անկումով» և սկզբի կ հնչյունի զխմելացիայով) պահպանված պետք է լինի կովկասյան ազգանունների վերջին մասում «որդի» նշանակությամբ (վրց. շվիլի կամ ձե «որդի» բառերին համազոր ազգանունների մեջ): Այսպես 1) (կվա - զվա բառաձևով ազգանուններ տարածված են Գուրիայում, օր. Ինգուր-զվա «Ինգուրյի որդի», Ռե-դվա, Ասա-սվա, Ճուբու-դվա-ձե (միաժամանակ նաև ձե «որդի» բառի հավելումով)... 2) -դվա - դուա բառաձևով ազգանուններն են՝ Բաժու-դուա (աղի-դերեն րաժա «ճանճ» + դուա «որդի») «ճանճի որդի», Ցալա-դուա, փա-զվա (փա-զվա-վա)... 3) -թուա բառաձևով ազգանուններն են՝ Բո-թուա, Լարա-թուա (հմտ. Լարա-ձե), Չու-թուա (Զու-թվա-շվիլի)... 4) -կվա - կուա բառաձևով՝ Թալա-կվա-ձե (հմտ. Արլու-դվա), Վե-կուա, Ռե-կվա-վա (հմտ. Ռե-զվա)... 5) -զվա - զուա բառաձևով՝ Զի-զուա (Զի-զվա-շվիլի), Լե-զուա, Սի-զուա, Գա-զուա... 6) -վա բառաձևով՝ Բոլ-վա-ձե, Պալա-վա-ձե, Զր-վա Զր-վա-վա (< Զի-քվա-վա)... և այլն:

Այսպիսով, ուրեմն, հյ. երինջ բառն էլ, որ նույն է քարթվել հրիմջ-ի «կենդանի» բառի հետ, պետք է նույնպես իմաստային լայն առում ունենար, նշանակելով ընդհանրապես «կենդանի, գոյակա»։ Այդ է ապացուցում նրա լայնարար արտահայտած «կով» նշանակությունը («Արմ. բառ.» երինջ բառի տակ)¹, որ համեմատաբար ավելի հին է (քան նրա արտահայտած «էդ հորթ» նշանակությունը)։

Ն. Մառը (Մфетич. элем. в яз. Арм., 1912, էջ 834) հյ. երինջ բառը կապում է ճան.-մեզրելերենի հետ։

Ե.

Կենդանիների կամ թռչունների զուգավորումը վրացերենում և ընդհանրապես քարթվելական լեզուներում, ինչպես ցույց է տալիս ահադ. Իվ. Ջավախիշվիլին, զրսևորվում է երբեմն «էգ» և երբեմն էլ «արու» կենդանու կամ թռչունի անունով, ինչպես օր.՝ վրց. ցերրվա «ոչխարների զուգավորում» ձևը ցերրի «էդ կենդանու» անունից. վրց. ձուվնոբա || մձուվնոբա «շան և զագանների զուգավորում» ձևը ձուվի «էդ կենդանու» անունից. վրց. զաճաճա || զաճկճա «ծիրու և էշի զուգավորում» ձևը ճալի «էդ կենդանու» անունից, այլև վրց. դամամլբա «թռչունների զուգավորում» ձևը մամալի «արու, աքաղաղ» բառից. սվան. լի-կեշ-կեշ-ալ «խոզերի զուգավորում» ձևը կեշ «արու խոզ» բառի կրկնությունից... և այլն։

Սվաներենում, օր., լիվրիշ || լիվրի շրնտանի՝ կենդանիների զուգավորում» բառաձևի մեջ լի- նախամասնիկ է, արմատը վր-, որի լրիվ ձևը սվաներենում պահպանված է մավիր «արջառ» բառաձևի մեջ (բարու կենդանու» անունից կազմված լինելով)։

¹ Պ. Պ. Անտոյանը («Արմ. բառ.», երինջ բառի տակ) երինջ բառը համարում է հայերենից անցած քարթվել. լեզուներին։

² Ի դեպ պետք է նշել, որ ընտանի բառի արմատը, ըստ Խաչընտ-ու ռեդ. է, որ ըստ «Առձեռն» բառարանի նշանակում է՝ 1. «հունց, ընդհզեն, նեղհզեն» և 2. «սերունդ, զավակ» (նմանությունը անբ. բառի, որ նշանակում է «1. սերմ, հունտ, 2. սերունդ, զավակ» ըստ «Առձեռն»-ի)։ Ունդ || ունթ բառի երկրորդ սերունդ, զավակ իմաստից, որ բուն իմաստի հետ, անշուշտ, սերտորեն է կապված և նրա անմիջական զարգացումն է, պետք է ծագած լինի, իմ կարծիքով, ընտ-անի(-թ) բառը։ Արմատն է ըն<ուն<ունդ (մասնիկը՝ -անի(-թ), որ հոգնա-բառաստեղծական մասնիկներից է. դրա համար հմտ. *կի-անի-անի> կենդ-անի...), որ ինչպես երևում է, կապված է ունդ || ունթ սերմ, սերունդ բառի հետ (= վրց. ունդ-ի բռնյառ ըստ Ս. Օրբելիանու վրաց բառարանի. հավանաբար «հունց տվող բռնյառ», որից և վրց. ունդ-ի-ի «չհասունացած հատիկ, պտուղ, հունց») և կապ չպետք է ունենա «տուն» բառի հետ՝ *ընդ ան-ի ձևով (ինչպես մեկնում է «Արմ. բառարանը»՝ ընթ-ա-ծիճ «տան մարդ եղած, տան տղա», ընդ-ա-բույս «բնական, ընտանի», ընդ-արուտ «հնդով՝ ընդհզենոր սնված», ընդ-ակից «տնակից, բնակի, բնտանի», ինչպես նաև՝ ընդ-ել || ընթ-ել «ընտել, սովորած, վարժված», որից՝ ընդելթաւ «ընտանի կերպով», ընթելթաւյն «ավելի ընտանի», ընդելթաւն «սովորական, 2. ընտանեական», ընդելակից «ընտանի, սիրելի, սրտակից» («Առձեռն»-ից)։ Այս նույն ունդ բառի հետ պետք է կապել նաև ընդ նախդիրը՝ նախապես, իմ կարծիքով, տեղ «արմատ (ունց)» նշանակությամբ (հմտ. օալ՝ որպես կապական բառ և օալ, որպես «արմատ, արմատիք, տակուհ»)։

Սվաներենում խվիր «արու կենդանի» է, որն առանց սկզբի իս հնչյունի կլինի վիր (որն ավելի հնագույն ձև է)¹:

Այսպիսով, ուրեմն, վիր-ի բառը, որ այսօր վրացերենում նշանակում է բնդհանրապես «էջ» և մի ժամանակ՝ հին վրացերենում «արու էջ» է նշանակել, նախապես քարթվել լեզուներում արու կենդանու ընդհանուր անունն է եղել:

Մյուս կողմից ուրա «արու (ծի)» է նշանակում, սա առաջինի (վիրի բառի) համեմատությամբ սկզբում ու- ունի (մյուսը՝ վի-). նման փոխանցում վրացերենում սովորական է (օր.՝ ճան. մեզը. գիրիճի «էջ» *գվիրիճի, որի կողքին կա նաև ճան. գուրուճի)... և այլն:

Վրց. ուր-ա բառաձևի կողքին եղել է ութ-ի «որդի, արու դավակ» բառը. սա պահպանված է մեծ մասամբ, ինչպես ցույց է տալիս ակադ. Իվ. Ջավախիշվիլին, արևելյան վրաստանի մի շարք ազգանունների մեջ և համադրո է վրց. շվիլ-ի «որդի» բառին. այսպես օր.՝ Գիգա-ուր-ի = Գիգա-շվիլի «Գիգայի որդի», Գավթարա-ուր-ի = Գավթարա-շվիլ-ի «Գավթարայի որդի», Գավթա-ուր-ի = Գավթա-շվիլ-ի «Գավթայի որդի», Սաբա-ուր-ի = Սաբա-շվիլ-ի «Սաբայի որդի»... և այլն:

Վրց. ուր-ի «որդի» բառը, իմ կարծիքով, նույնն է հյ. ուր-ջ-ու «խորթ որդի» բառի *ուր «որդի» արմատի հետ²: [Ուր-ջ-ու բառի մեջ ուր արմատն է, մնացածը մասնիկներն են՝ -ու մասնիկը հմտ. հօր-ու, մօր-ու < հօր, մօր բառերի հետ, իսկ -ջ սեռականի հոլովանիչն է. հմտ. գեղ-ջ < գեղ | | գիւղ]³:

Այս *ուր «որդի» բառը, որ վերականգնվում է և, ինչպես Ն. Մառը կասեր, հարեթական (նախա-արիական) լեզվաշերտի արդյունքն է հայերենում, բնականաբար կապվելով վրց. նույն ուր «որդի» բառի հետ, պրոֆ. Ն. Աճառյանը (տ. Հայկ. ՄՍՌ ԳԱ-ի «Տեղեկագիր», № 6, 1946, էջ 25) աշխատում է հանել հնիս. putro- բառից, որ, ինչպես ասում է, պահված է միայն արիական ճյուղում: Ահա թե ինչպես. տվյալ բառի նախաձայն ք ջնջվել է ու ձայնավորից առաջ, իսկ ի բաղաձայնը Ի-ից առաջ դարձել ու...

¹ Հմտ. իս հնչյունի համար վրց. խվալ «վաղը» և հյ. վաղ(ը) «1. վաղը, 2. շուտ»:

² Վրց. ուր-ի «որդի» բառով բավականաչափ ազդանուններ ենք գտնում Վախուսի վրաստանի աշխարհագրոլոյուն գրքում (აფშრას სამეფოსა საქართველოსა, ტბილისი, 1941), ինչպես օր.՝ Օսիա-ուր-ի (81,13), Մուխա-ուր-ի (80,15), Քաչալա-ուր-ի (102,5), ձիւ-ուր-ի (103,24), Թագա-ուր-ի (107,13), Գուրա-ուր-ի (107,13), Գոնուա-ուր-ի (150,7), Թերձենա-ուր-ի (118,38), Գագա-ուր-ի (158,22), Կախիա-ուր-ի (147,38), Մանուա-ուր-ի (153,23), Ամբուա-ուր-ի (104,41), Փիճեղա-ուր-ի (103,32), Փալաղա-ուր-ի 102,28)... և այլն: Այս -ուր «որդի» բառը, իմ կարծիքով, պատահում է նաև վրաց ուրիշ բառաձևերում՝ նախապես նույն «որդի» նշանակությամբ, ինչպես օր.՝ վրց. մո-զգա-ուր-ի || «ժ-զգա-ուր-ի > մ-զգա-վր-ի, որ համադրո է հյ. ճանապարհ-որդ > ճանապարհ-որդի, նախապես նշանակելով «ճանապարհի որդի» երկու լեզվում էլ: Այսպես նաև՝ վրց. մքի-ուր-ի «լեռն-որդ || *լեռն-որդի || լեռն որդի = լեռնական, լեռնցի», մզի-ուր-ի «ժառ-որդ || *ժառ-որդի || ժառնական, ժառնցի», գի-ուր-ի «*երկն-որդ || *երկն-որդի || երկնի որդի = երկնային», վել-ուր-ի «*վայր-որդ || *վայր-որդի || վայրի որդի = վայրենի», ազճա-ուր-ի «*ազն-որդ || *ազն-որդի ազնիվ որդի ազնվական, ազնվազարմ... և այլն:

³ Բերդու բառը եթե արդի բառի հնչյունափոխված ձևը չէ (որդի > որջի > ուրջի ուրջու):

⁴ Տես Հայկ. ՄՍՌ ԳԱ-ի «Տեղեկագիր»-ը, № 6, 1946, էջ 25, պրոֆ. Աճառյանի հոդվածը:

«Ահա այս putro- բառն է, որ դարձել է հյ. ուր և որ նույնպես կտրել է մեր մեջ իր չափազանց կարճության պատճառով (sic!), մանավանդ որ, — պատճառաբանում է նա, — շփոթվում էր համանուն ուր բառի հետ (sic!), նրա փոխարեն հնարվել է ուստր բառը (sic!)¹, իսկ ուր «որդի» բառի հետքը մնացել է սևո. ուրջ ձևով՝ արքու թխորթ որդի» բառի մեջ»:

Որ *ուր «որդի» բառին կարող էր ավելանալ -ջ սեռ. մասնիկը և ապա -ու մասնիկը նմանապես, ոչինչ չունենք ասելու: Բայց որ այդ *ուր «որդի» բառը ծագած չէ հնի. putro- բառից և իր էությունով սերտ աղագակցության մեջ է քարթվել. ուր-ի «որդի» բառի հետ, այդ արդեն, իմ կարծիքով, անվիճելի է:

2.

Վրց. բի-նի < բի-նիկ-ա, ինչպես ցույց է տալիս աղագ. իվ. Ջավախի-շվիլիթ, նախապես երկու սեռի «երեխա» է նշանակել՝ հետագայում արդեն՝ արական սեռի «տղա»: Ծիկ || չիկ, որից՝ քո-չիկ-ի «մի տարվա եղջերու» է (ըստ Օրբելիանու վրաց. բառարանի), որը Ռաճայում «ձմեռն անցկացրած հորթ» է նշանակում:

Ծիկ || ճուկ, որից՝ հուկ-ի,² օր., հախթում «հնգուհավի ձագ» է նշանակում, իսկ մեզրելերենում՝ «մկան ձագ, մկնիկ»:

Պարզ է, որ այստեղ՝ բի-նի < բի-նիկ-ա, քո-չիկ-ի և ճու-կի՝ բոլորն էլ «որդի, ձագ» նշանակող միևնույն արմատի նիկ || չիկ || ճուկ տարբերակները պետք է լինեն, իսկ սկզբի բի- և քո- անչափահասության մասնիկներն են նմանապես:

Ծիկ || ճուկ ձևերի կողքին վրացերենում կա նաև ճակ տարբերակը, որ հնում «էգ կենդանի» է նշանակել (իսկ հետագայում «էգ ձի կամ էջ» իմաստի նեղ առումն է ստացել): Այսպես օր.՝ վրց. ճակ-ի «էգ ձի և էջ» (ըստ Օրբելիանու վրց. բառարանի), սվան. ճագ մեծ մասամբ «էգ ձի և էջ», իսկ ճագ (ա ձայնավորի նեղ արտաբերումով) «էգ այծ», ճան. ճակ-ի «էգ կենդանու» ընդհանուր անունն է:

Մե-նիկ-ի «մերան» (ըստ Օրբելիանու բառարանի) բառը մայր (մածոնի կամ պանրի մայրը, մերան) պետք է նշանակել: Այստեղ մա- դեր-բայական մասնիկ է, արմատը՝ նիկ- է, երկուսը միասին՝ մե-նիկ-ի «ստեղծող» նշանակությամբ:

Ծիկ (օր.՝ քո-նիկ-ա ձևի մեջ) բառարմատից՝ նի (կ հնչյունի անկու-

¹ Ուստր բառը պետք է ծագած համարել զիսիմիադիայի շնորհիվ դուստր «աղջիկ» բառի կրկնության ու տրոհման հետևանքով. այսպես՝ դուստր-դուստր (սկզբում դ հնչյունի անկումով. հմտ. առք-փառք, արան-չարան, ապ ու պապ, ատուտատ և օր.՝ «Գետք է փրկորես նրա հոր մեջ, մոր մեջ, պապի, ալլալալայի, տատի, ատուտատի և այլն, մինչև կհասնես Աղամին ու Նվային...» Ղ. Աղայան, Արուստյուն և Մանվել, երկրորդ տիպ, ք զիբր, Թիֆլիս, 1889, էջ 39), որ տրոհվում է և դուստր «աղջիկ» բառի կողքին գործ էածվում ռուստր «տղա» նոր բառը՝ նոր իմաստով: Այսպես նաև՝ ռյուր-մյուր (ռյուր և մյուր, որպես առանձին բառեր) և այլն:

² Ծուկ բառարմատի կրկնությամբ կա հայերենում՝ ծու-ճուկ «հավ, հավի ձագ», որից՝ ճու-ճու (կ հնչյունի անկումով) «նույն նշ.», ինչպես նաև (կ↔լ զիսիմիադիայով)՝ ճուճուկ - ճուճուկ (|| ճուճուկ-թկ) («մանկ.» ճնճուկ, թռչուն... և այլն):

մով, օր.՝ բի-նի ձևի մեջ) և նույնպես կ-ի անկումով, օր.՝ Պա-բի-նու-ար-ի ապօրինի զավակ՝ ձևի մեջ)՝ այս եի և նույն արմատ-փոփոխականները՝ այս ձևով պահպանված են թե վրացերենում և թե հայերենում, որոնք, անշուշտ, ազգակից են իրար։

Նախ վրց. բի-նիկ-ա տղա՝ ձևի կողքին կա նաև՝ քա-նիա ճնապաստակի ձագուկ (բոստ Ս. Օրբելիանու վրաց. բառարանի), մեկը մյուսի հնչյունափոխությունը (կ հնչյունի անկումով)։ սա է՛լ նաև-վա || նիկ-վա թատերգին, բերել՝ բայից պետք է կազմված լինի։

Այստեղ՝ քա-նիա ճնապաստակի ձագուկ ձևի մեջ՝ քա- անչափահասության մասնիկն է, արմատն է՝ նիա, որը, իմ կարծիքով, նույնը պետք է լինի վրց. ուա մեջյուն, որդի բառի հետ։ Սրա մյուս փոփոխակն է նույն տրոհը։ Այս երկուսի կրկնությունից են, անշուշտ, վրց. նիա-նուա (|| նիա-զուա) տրոհերը || նիա-նու-նիա՝ մեջյունը բառաձևերը։ Սրան ազգակից պետք է լինի հյ. նի-նի || նի-նու (> ճնի || ճնու) ճնի, որդի... և այլն։¹

է.

Վրց. դեղայ || դեղա-ի բառաձևերը թնոդ, մայր, ինչպես ցույց է տալիս ահադ. Իվ. Ջավախիշվիլի, ընդհանրապես թիզական սեռն են նշանակել, Վրց. դեղա-ի բառի մյուս տարբերակն է՝ դեղալ-ի թեղ կենդանի կամ թռչունը։ Նույնը մեզը. դադուլ-ի || դադու-ի թեղ, իսկ ճան. դադուլ-ի թեղ հավա է։

Քանի որ դեղայ, դեղալ-ի և դադուլ-ի բառաձևերը թե մայր և թե թեղ են նշանակում, ուստի պարզ է, որ նախապես նրանք ընդհանուր նշանակություն պետք է ունենային (թեղ, թիզական սեռի դադափառ պետք է արտահայտեին)։

Օր.՝ ճան. դե-դվափու և դե-դվալու և մեզը. դվալա || դե-դվալա թղնի, ածել, բերել, ծնել են նշանակում։ Այսպիսով, ուրեմն, դվալ բառարմատը նշանակում է թե թռչունների թնու զնել, ածել և թե կենդանիների թծին (նույնիսկ մարզու թնունդ)։

Սվան. լի-թուալ (լի նախամասնիկով) թնել է նշանակում։ Ծան.-մեզը. դվալ և սվան. (լի-)թուալ ձևա-իմաստային համարժեքներն են։ Քարթվեց. դե-դալ-ի *դե-դվալ-ի || դե-դվալ-ի > դա-դալ-ի թեղ, մայր՝ բառերը միևնույն արմատը պետք է ունենան։

Այսպիսով՝ քարթվել. թուալ || դվալ > դուլ (վա - ո) փոխանցումը շատ սովորական է. ուրեմն, դուլ թղնի, ածել, բերել, ծնել բառը իր հերթին նույնն է հյ. դուլ թռչունների ծին (և ընդհանրապես թառ) բառի հետ (որը քրդերենից փոխառյալ չի կարող լինել հայերենում, ինչպես կարծում են ոմանք)... և այլն։

¹ Վրացերենում, բոստ իս, նույն արմատի կրկնությամբ պետք է կազմված լինեն նույն-նուլ-ի ճնուա, իսկ բու. անչափահասության մասնիկով՝ բու-նուլ-ի > ու-նուլ-ի (երկուսը միասին՝ ունուլ-բունուլ-ի կրկնականը) փոքրիկ բառերը (ուհյ. սլուծուր)։ Այստեղ պետք է նշել նաև, որ վրց. նիա-զուա ճնուները կրկնականի || մասը՝ զուա (< դվա) ձագ, որդի է նշանակում և ունի մի շարք տարբերակներ, որոնք զալիս են կովկասյան զուա ձագ, որդի բառից (տ. իմ հայ-վրացական բառային զուգագրիկումները)։ զու-իւն բառի տակ, էջ 81—83. Երևանի Պետ. Համալս. Ն. Մոսի կարիքների աշխատություններ, № 2, 1947)։

Ը.

Հյ. բռչոյ փոքրիկ ձի՝ բառը, անշուշտ, նույնն է վրց. բռչովա ժամեն անցկացրած՝ մի տարեկան եղ՝ ըստ Ս. Օրբելիանու վրց. բառարանի։ Սրա կողքին կա նաև՝ վրց. բռչիկի մի տարեկան եղջերու՝ նույնպես ըստ Օրբելիանու բառարանի։ Վրացերենում, ինչպես ցույց է տվել ակադ. Իվ. Զավաիշվիլին¹, բռ- մասնիկը երբեմնի (նախապատմական շրջանի) անշափահասության մասնիկն է։ Այս մասնիկը առկա լինելով հյ. բռ-չոյ և վրց. բռ-չու-ա (կամ՝ բռ-չիկ-ի) բառաձևերի մեջ՝ անշուշտ պահպանել են փոքրի, անշափահասի՝ զաղափարը (օր.՝ հյ. բռչոյ նշանակում է փոքր ձի, վրց. բռչովա՝ ժամեն անցկացրած՝ մի տարեկան եղ՝ և այլն)։ Սրանց բառարմատն է՝ չոյ || չու-, որ իր հերթին պետք է կապված լինի չու ձծի բառի հետ (օր. աբխազ. ա-չու ձծի, վրց. և հյ. եա-չու ձծի քշելու ձայնարկություն՝ և այլն)։ Այս չոյ || չու բառարմատը պետք է արտահայտեր նախապես ժաշխատավոր կենդանու (այն է՝ ձիու, եղան, եղջերվի և այլն) զաղափարը, որ ըստ աշխատանքի կիրառման ու պահանջի՝ հեշտությամբ կարող էր փոխարինել իրար (ձի, եղ, եղջերու)՝ անունները պահելով նույնը [պրոֆ. Աճառյանը իր Արմ. բառարանում հյ. բռչոյ բառը համարում է վրց. բաշա-ցիխեի փոքրիկ ձի՝ ձևից ծագած, որ, իմ կարծիքով, ճիշտ չէ]։

Թ.

Հյ. խոն-կոր խոզի ձագ՝ բառը կաղճությամբ բարդ է՝ կաղճված լինելով խոն- (|| *ղոջ-) խոզ՝ և կոր ձագ՝ պարզ բառերից (երկուսը միասին՝ խոն+կոր խոզի ձագ)։ Չենք խոսում կոր բառարմատի մասին, որ, ինչպես այստեղ (Գ. զլխում) տեսանք, նշանակում է ձագ, զավակ։ Ինչ վերաբերում է խոն- բառարմատին, սրա սկզբնական ձևն է՝ *ղոջ- || ղեջ-, որը վրց. ղոր- խոզ՝ բառի ճան.-մեզր. տարբերակն է անշուշտ (ղեջ- || *ղոջ խոզ՝ ձևով՝ ր > ջ փոխանցումով, ինչպես օր.՝ վրց. փուր-ի=ճան. փուջ-ի եկով, վրց. խութ-ի=ճան. խոջ-ի եեզ, վրց. քմութ-ի=ճան. քմոջ-ի շայր, ամուսին... և այլն)։ Այսպիսով վրց. ղոր-ի խոզ՝ բառի ճան.-մեզր. փոփոխակն է ղեջ-ի՝ (|| *ղոջ-ի խոզ, վայրի խոզ), որի հետ կապվում է նաև՝ հյ. *ղոջ- || խոն- > խոն-կոր խոզի ձագ՝ (-կոր ձագ՝ բառարմատով բարդված. կոր բառի համար հմտ. հյ. կոր-իւն, կոր-ն-ալ...)։

Այս ղեջ- || *ղոջ- || ղոն- ճան.-մեզրել. փոփոխակից, իմ կարծիքով, պետք է ստացված լինի նաև վրց. ղոն-ի *ղոն-ի խոնկոր, խոզի ձագ՝ (ղ > ղ փոխանցումով, ինչպես օր.՝ Ղոդորերիձե || Գոգորերիձե, Ղոմելաուրի || Գոմելաուրի... ազգանունները և այլն), որից և՛ վրց. ղոն-ա խոզի ձագին նմանող ձկան մի տեսակը = հյ. կոն-ա || ղոն-ա խոզ (տես Արմ. բառ.), որը նույնն է, անշուշտ, հյ. խոն- (խոն-կոր բառաձևի մեջ) բառարմատի հետ (խ || կ զխիմիլացիայով. հմտ. տարբերակման համար խիճ || կիճ ջրար...) և այլն, և այլն։

¹ Իր Վրաց և կովկասյան լեզուների ամենակարգական բնույթն ու ազգակցությունը, 1937, Թբիլիսի (վրաց լեզվով)։

² Այս ձևի հեա Ն. Մառը կապել է հյ. կիճ Վայրի խոզ՝ բառը (ա. նրա՝ Яфетический и в армянском языке.—390, т. XIX, стр. 0154—0159)։

Ժ.

Հայոց և վրաց լեզուներում պահպանված են նաև ձկների մի շարք ընդհանուր անունները, որոնք կապվում են ձկնորսության հետ։ Իսկ ձրկնորսությունը մարդկության վաղագույն զբաղմունքներից մեկն էր։ Դրանցից են, օր․՝

1. Հյ. Թառափ *թարփ > քարթ = վրց. տարտ-ո (քարթ-ի թթառափ ձուկը)։
2. Հյ. Լոֆ || Լոֆո = վրց. Լոֆո (լոֆո մեկանաձուկ, սեպիա)։ Ոռչոր ձկան տեսակ է, առանց թեփի, մեծ զլխով, լայն բերանով, որ գտնվում է կուր և երասի գետերում, ինչպես և Կասպից և Սև ծովերում [Հ. Աճառյանը (եկրմ. բառ.) վրացերենը համարում է հայերենից փոխառյալ]։
3. Հյ. Կարմրախայտ եկամրախետ = վրց. յալմախա (կալմախա ձուկ) բատ. Ս. Օրբելիանու վրաց. բառարանի)։
4. Հյ. Ճանար = վրց. Յանար-ո (ճանար-ի || ճանար-ա ձուկ) բատ Ս. Օրբելիանու վրց. բառարանի)։
5. Հյ. Մուրծ || մուրծա || մուրզա = վրց. Թյոթո (մուրծա || մուրծի) ելպըր-ծուն մորթով, փոքր ինչ գեղնավուն, ժեռ, սրաքիթ, բեխերով, համեղ ձուկ (Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան)։
6. Հյ. Տարեղամ = վրց. Ծարեղամ (տարաղանա) եզուխի, թառափ և այլն, և այլն։

Ի.

Մարդկության վաղագույն զբաղմունքներից մեկի՝ որսորդության ու ձկնորսության հետ պետք է կապել ոչ միայն հայ-վրացական մի շարք կենդանիների ընդհանուր անունները, այլև, իմ կարծիքով, բավական մեծ թիվ ներկայացնող թռչունների ընդհանուր անունները, որոնք մինչև օրս էլ պահպանված են հայոց և վրաց լեզուներում։ Դրանք՝ ինչպես վայրի, այնպես էլ ընտանի թռչունների ընդհանուր անուններն են, որոնց մի մասը բնաձայն է և մի մասն էլ կազմությամբ կրկնավոր բառեր են (կազմված պարզ արմատի կրկնությունից), ինչպես օր․՝ հյ. ոսկ-լոկ եաղափնի, ուր-ուր (= վրց. օլ-օլ-ի), քար-քար-ան (-ան մասնիկով) եուրուր, ցինն), եսպ-ոպ (= վրց. օփ-օփ-ի), լազ-լազ (= վրց. լակ-լակ-ի) եարագիւ, ճուռ-ճուռ ենդկաւա, կ-կու (= վրց. գու-գու-ի), կամ՝ վրց. ճավ-ճավ-ի եճնճուկ, կան-կան-ի եկաչաղակ և այլն։ Մտորե կտեսնենք այն ընդհանուր թռչունների անունները, որոնք պահպանված են հայոց և վրաց լեզուներում։ Դրանցից են, օր․՝

1. Արծիվ = արծիվ-ո (արծիվ-ի)

Նույնն են՝ հյ. արծիվ || արծվի եարծիվ թռչունը և վրց. արծիվ-ի եարծիվ, որից և արծիվակ-ի || արծվակ-ի ետան երկրորդ սյունը։ Բատ Ս. Օրբելիանու վրց. բառարանի։ Կա նաև քարթվել. մյուս լեզուներում, ինչպես նաև չեչեն. օրշու եարծիվ և այլն։ [Հ. Աճառյանը (եկրմ. բառ.) հյ. արծիվ բառը հանում է ննդ. rǝ'lp̄ya ձևից և վրացերենը համարում է հայերենից փոխառյալ]։

2. Բադ — ճաճ-ո (բատ-ի)

Հյ. բադ || բադ երնտանի թռչունների մի տեսակը բառաձևի դիմաց,

որ տարածված է բազմաթիվ լեզուների մեջ, ինչպես օր.¹ ասոր. batta, արար. batt բազ, պրսկ. bat և բրդ. bet բադ, վայրի սագ, չեչեն. bad, bad, ակուշ. bad, վոգուլ. batta, pat, կայտախ. խյուրկ. badbad, բուրն էլ բադ նշանակությամբ. վրացերենում գործ է ածվում ճած (բատ-ի), ինչպես նաև՝ մեգր. թուշ. սվան. բատ || բատա || բատե, կյուրբ. բատտ և ալբան. bate՝ բուրն էլ սագ նշանակությամբ (եկրմ. բառ. ք)։

3. Բազե || ծած-ո (բագ-ի)

Հյ. բազե շահեն թռչունը՝ բառի դիմաց, որ նույնն է համարվում պհլ. baz կամ baլ, պրսկ. bāz, bazo բադե՝ բառի հետ (եկրմ. բառ. ք՝ չյուրջմանի համաձայն), վրացերենում կա ծած-ո (բագ-ի բազե), որից՝ ծածոյո-ո (բագիեր-ի բազեվար՝ բատ Ս. Օրբելիանու վրաց բառարանի)։ [Հ. Աճառյանը (եկրմ. բառ. ք) հայերենն ու վրացերենը համարում է իրանականից փոխառյալ]։

4. Բու = ծո (բու)

Լնդհանուր բառերից է՝ բու, բատ երևույթին, բնաձայն, որ երկու լեզվում էլ ինչ որ բու՝ ձայնի հետ է կապված, որով կոչվել է, անշուշտ, միևնույն թռչունը [Հ. Աճառյանը (եկրմ. բառ. ք) հայերենը համարում է բնաձայն և վրացերենից անկախ կազմված]։

5. Դուխ (|| դոկ-դոկ) — Թույ-ոս (դուլ-իա)

Նույնն են, անշուշտ, հյ. դիս և 1. վառեկ, 2. աղափի, աղափու ձագ՝ (որից և՛ դոկ-դոկ կրկնականը՝ նույն նշանակությամբ) և մեգր. Թույ-ոս (դուլ-իա հավիկ, վառեկ)՝ տես Кипшидзе, Грамматика мингр. яз. բառարանը)։

6. Թուրակ = Թոտ-ո (թուր-ի)

Հյ. Թուրակ պապկա, փափաղան թռչունը՝ բառի դիմաց, որ նույնն է համարվում պրսկ. totak, tott, արար. tuti, tutag բառերի հետ (եկրմ. բառ. ք), վրացերենում գործ է ածվում Թոտ-ո (թուր-ի «թռչուն» բատ Ս. Օրբելիանու վրաց բառարանի)։ [Հ. Աճառյանը (եկրմ. բառ. ք) հայերենը և վրացերենը համարում է իրանյանից փոխառյալ]։

7. Լագլագ — Լոջլոջ-ո (լակլակ-ի)

Լնդհանուր են՝ հյ. լագ-լագ և վրց. լակ-լակ-ի «արագիլ» (բատ Ս. Օրբելիանու վրաց բառարանի), երկու դեպքում էլ, անշուշտ, արմատի կրկնությունից կազմված՝ լագ-լագ || լակ-լակ-ի։

8. Միտ = Խոժ-ո (չիտ-ի)

Լնդհանուր են՝ հյ. ծիտ || չիտ || ջիտ «ճնդուկ» և վրց. չիտ-ի «մանր թռչուն»՝ բատ Ս. Օրբելիանու վրաց բառարանի, որից և՛ ջիլո-խոժ (մծղ-եր-չիտ-ա «մի տեսակ թռչուն է»), ճոժ-խոժ-ա (մծղ-չիտ-ա «մի տեսակ թռչուն է»)... և այլն [Հ. Աճառյանը (եկրմ. բառ. ք) հայերենը համարում է վրացերենից փոխառյալ]։

9. Կաչ-աղակ = Կաչ Կաչ-ո (կաճ-կաճ-ի)

Լնդհանուր բառարմատներից են, անշուշտ, կաչ || կաճ-, հավանաբար, բնաձայն, որից՝ հյ. կաչ-աղակ (-աղակ մասնիկով, ինչպես օր.¹ փակ → փակ-աղակ) և վրց. Կաչ-Կաչ-ո (կաճ-կաճ-ի՝ արմատի կրկնությամբ)՝ միևնույն «կաչաղակ թռչունը» նշանակելով [Հ. Աճառյանը (եկրմ. բառ. ք) հյ. կաչ-աղակ բառը համարում է պհլ. *kačalak ենթադրյալ ձևից փոխառյալ]։

10. Կափալ = յօյաձ-ի (կակար-ի)

Հյ. կափալ եկաքավ թոչունը՝ բառի դիմաց, որ նույնն է համարվում ասոր. qaqqaḫa, qaqqaḫava եկաքավ բառերի հետ՝ հուն. κακαχαζη եկաքավ (եԱրմ. բառ. ք), վրացերենում գործ է ածվում յօյաձ-ի (կակար-ի եկաքավ)։ [Հ. Աճառյանը (եԱրմ. բառ. ք) հայերենը համարում է ասորերենից, իսկ վրացերենը հունարենից փոխառյալ]։ Ն. Մառը (ЯЗЫК И ИСТОРИЯ. 122) հայերեն ու վրացերեն ձևերը համեմատել է մյուս լեզուների համանիշների հետ։

11. Կուլ = քոլքոլ-ի (գուգուլ-ի)

Ընդհանուր են՝ հյ. կկուլ եկկուլ թոչունը և վրց. գուգուլ-ի եկկուլ՝ երկուսն էլ, անշուշտ, բնաձայն՝ կուլ- || գուլ- արմատի կրկնությունից կազմված, այսպես՝ հյ. *կուլ-կուլ > *կրկուլ > կկուլ և վրց. *գուլ-գուլ (-լ մասնիկի հավելումով) > գուլ-գուլ-ի-ի [Հ. Աճառյանը (եԱրմ. բառ. ք) հայերենը բնաձայն ըստ է համարում և այլևս փոխառություն չի դնում, բայց բերում է նաև վրացերեն ձևը]։

12. Կորն = քորք-ի (դուրն-ի)

Նույնն են՝ հյ. կորն եկտուցը կոր դիշատիչ թոչուն, պասկունձ և վրց. քորք-ի (դուրն-ի եթոչուն է՝ ըստ Ս. Օրբելիանու վրաց բառարանի)։ [Հ. Աճառյանը (Արմ. բառ. ք) վրացերենը համարում է հայերենից փոխառյալ]։

13. Էսպուպ = օթոթ-ի (օփուփ-ի)

Ընդհանուր են՝ հյ. եսպուպ (= յոպուպ) հոպուպ թոչունը և վրց. օթոթ-ի (օփուփ-ի հոպուպ)՝ կազմված արմատի կրկնությունից՝ *եպուպ-եպուպ > եսպուպ || օփուփ։ [Հ. Աճառյանը (եԱրմ. բառ. ք) հայերենը համարում է բնաձայն և վրացերենը՝ հայերենի հետ պատահական նման]։

14. Զայ = յօհ-ի (նար-ի)

Նույնն են, ըստ երևույթին հյ. ճայ եուրուր և վրց. յօհ-ու (նար || ղ նար-ի բազին է նման, ծառին է նստում, օրից ձուկ է փախցնում և ուտում)՝ ըստ Ս. Օրբելիանու վրաց բառարանի [Այս բառերը նման է համարում Հ. Աճառյանը (եԱրմ. բառ. ք)։

15. Զննուլ = յոննալ-ի (նիննալ-ի)

Ընդհանուր Վ.Ն. անշուշտ, հյ. ճննուլ ճննգուկ և վրց. յոննալ-ի (նիննալ-ի ծառի փշակում բուն դրած ձմեռն անդորացած ճանճերն ուտող թոչնիկ է, որին արևմտյան վրաստանցիները նիննալ են ասում)՝ ըստ Ս. Օրբելիանու վրաց բառարանի։ Զննուլ բառը հայերենում ստանում է -ուկ մասնիկը՝ * ճննուլ-ուկ ճննուլ-ուկ, իսկ վրց. նիննալ- || նիննար- բառից յոննալ-ալ (նիննար-ալ եթոչուն)՝ ըստ Ս. Օրբելիանու վրաց բառարանի։ Ն. Մառը (Яфет. назв. дур. и раст. էջ 835) հյ. ճննուլ բառը համեմատել է վրց. յոննալ-ալ (նիննար-ալ) բառի հետ՝ երկուսն էլ եթոչուն նշանակող։ [Հ. Աճառյանը (եԱրմ. բառ. ք) ճննուլ բառը բնաձայն է համարում]։

16. Պու-նու || նու-նուկ = յու-յուլ-ի (նու-նուլ-ի)

Նույնն են՝ հյ. նու-նու || նու-նուկ (մանկ.) հավ, հավի ձագ՝ կամ նու-նուլ || նու-նուլիկ (մանկ.) ճնդուկ, թոչուն (ըստ Ստ. Մալխասյանցի Հայերեն բացատրական բառարանի) և վրց. յու-յուլ-ի (նու-նուլ-ի բառի

և սաղի ճուռ» ըստ Ս. Օրբելիանու վրաց բառարանի՝ երկուսն էլ պարզ արմատի կրկնությամբ կազմված (նու կամ նուկ || նուլ || նուդ)՝ հյ. նու-նու, *ճուկ-ճուկ > նու-նուկ, *ճուդ-ճուդ . || նու-նուդ || նու-նուդ-իկ (-իկ մասնիկով) և վրց. *նուլ-նուլ-ի > նու-նուլ-ի ձու արմատի հետ է կապված նաև հյ. նուտ «հավի ձագ»:

17. ձուռ-նուռ (|| նավ-նավ) = յաց-յաց-ու (նավ-նավ-ի)

Նույն կազմությունն ունեն՝ հյ. նուռ-նուռ, նուր-նուր || նավ-նավ «հնդկահավ» (ըստ Ստ. Մալխոյանցի Հայերեն բացատրական բառարանի) և վրց. յաց-յաց-ու (նավ-նավ-ի || նիվ-նավ-ի || նիվ-նիվ-ի «թռչուն» ըստ Ս. Օրբելիանու վրաց բառարանի)՝ երկուսն էլ բնաձայն և կազմված (նուռ || նուր, նավ || նիվ) պարզ արմատի կրկնությունից՝ հյ. նուռ-նուռ > նուռնուռ || նուրնուր, նավ-նավ > նավնավ և վրց. ճավ-ճավ > նավնավ-ի (այստեղից էլ՝ ձավճավձե աղ-զանունը), նիվ-նավ > նիվնավ-ի, նիվ-նիվ > նիվնիվ-ի, ձուռ արմատի հետ է կապված նաև հյ. նուռ-եկ «անպուշ հավ, կուտուղ»:

18. Ուրուր || ոլոլոլ-ու (օլոլ-ի)

Նույնն են, անշուշտ, հյ. ուրուր «ցին թռչունը» և վրց. ոլոլոլ-ու (օլոլ-ի «թռչուն» ըստ Ս. Օրբելիանու վրաց բառարանի)։ [Հ. Աճառյանը («Աղբ. բառ.») հյ. ուրուր բառը համարում է հնդ. Օլ-արմատից ծագած]։

19. Սարսարակ – սահսահ-ու (սարսարակ-ի)

Նույնն են, անշուշտ, հյ. սարսարակ «մի տեսակ թռչուն» և վրց. սահսահ-ու (սարսարակ-ի «թռչուն» ըստ Ս. Օրբելիանու վրաց բառարանի)։ Կազմությամբ երկուսն էլ, իմ կարծիքով, կրկնական ձևերն են՝ սար-պարզ արմատի կրկնությամբ՝ սար+սար-ուկ (-ակ մասնիկով)։ Սար- արմատը, ըստ իս. առկա պետք է լինի նաև սար-եկ կամ սար-իկ ձևերի մեջ։ [Հ. Աճառյանը («Աղբ. բառ.») նույնը կամ նման է համարում հյ. սար-սարակ և վրց. սարսարակ-ի]։

20. Սիր-ամարգ = սուր-ու (սիր-ի)

Բնահանուր բառարմատն է սիր- «թռչուն» նշանակությամբ, որից՝ հյ. սիր-ամարգ (ինչպես օր.՝ լուր և լուր-ամարգ || լուր-ամարգի «խոր ափնի գիրուկ լուր» ըստ «Առձեռն»-ի), սիր «թռչուն» բառը նաև առանձին պետք է զործածական լիներ հայերենում էլ, ինչպես օր.՝ վրացերենում է սուր-ու (սիր-ի «ծիտ, թռչուն» ըստ Ս. Օրբելիանու վրաց բառարանի), որից՝ սուր-վալը (սիրավալ-ի «ջայլամ թռչունը»), սուր-սոռն (սիր-ախոյա «թռչուն է»), սուր-ցաթլա (սիր-վաշլա «սիրի ծառը»), սուր-յաթլա-յ-ու (սիր-կամ-կամ-ի «թռչուն է») ըստ Ս. Օրբելիանու վրաց բառարանի՝ բոլորն էլ սիր թռչունի հետ կապված։ [Ն. Մառի Извест. АН 1918, էջ 2086] հյ. սիր-ամարգ և վրց. սիր-ի «ծիտ, թռչուն», սիր-ափնա «ջայլամ» բառի մեջ սիր- բնահանուր բառարմատի մասին ճիշտ է գիտել։

21. Տարմ = ծարծ-ու (տարբ-ի)

Նույնն են, ըստ երևույթին, հյ. տարմ «սարեկ» (ըստ «Առձեռն»-ի) և վրց. ծարծ-ու (տարբ-ի «սեկվկո թռչունը» ըստ Ս. Օրբելիանու վրաց բառարանի)։ [Հ. Աճառյանը («Աղբ. բառ.») հյ. տարմ «թռչունների խումբ, երամ» բառի տակ վրացերենը դնում է փոխառության բաժնում]։

22. Քոր-քոր-ան = լոր-ու (քոր-ի)

Նույնն են, անշուշտ, հյ. քոր-քոր-ան «ցին, դարձ թուխ դույններով հալչտակիչ գիշատիչ թռչուն» (Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան) և վրց.

թուր-ո (ֆար-ի թթուշուն, գիշատիչ թռչուն՝ րստ Ս. Օրբելիանու վրաց բառարանի), որից՝ ծղ-ցուր-ո (ծեր-ֆար-ի թթուշուն, սպիտակ թռչուն), Հայերենը կազմված է պարզ արմատի կրկնությունից՝ ֆար-ֆար-ան (ան մասնիկով) և այլն:

Օգրտփակում.— Հայոց և վրաց լեզուներում այսօր գործածական մի շարք կենդանիների ինչպես նաև՝ թռչունների անունները, որ մենք այստեղ քննության առանք, անշուշտ գալիս են վաղագույն ժամանակներից, երբ մարդկային զբաղմունքի առարկան դեռևս որսորդությունն էր և կենդանիների (ապա և թռչունների) ընտելացումը:

Այսպիսով պարզ է, որ հայոց և վրաց լեզուների դարավոր ու անբակտելի կապը գալիս է ոչ միայն պատմական ժամանակներից, այլև նախապատմական ժամանակներից, երբ հայոց և վրաց նախատիպ բազմաթիվ լեզուները (ինչպես Ն. Մառը կասեր, հարեթական կամ նախաարիական լեզուները) ուժեղ ներթափանցումների ու խաչավորումների պրոցեսում գտնվելով նպաստել են հայոց և վրաց լեզուների ձևավորմանը և բազմաթիվ ընդհանրությունների դրացմանը: Ահա այս կարգի ընդհանրությունների թվին են պատկանում նաև այստեղ քննության առնված մի քանի տասնյակի շափ հայ-վրացական ընդհանուր կենդանիների (և թռչունների) անունները:

А. МУРВАЛЯН

Общие армяно-грузинские названия группы животных

Р е з ю м е

Исследованные выше названия ряда животных (а также птиц), употребляемые ныне в армянском и грузинском языках, несомненно, восходят к древнейшим эпохам, когда основой общественного хозяйства была охота и приручение животных (а затем и птиц).

Отсюда ясно, что вековая и неразрывная связь армянского и грузинского языков идет не только от исторических, но и доисторических времен, когда многочисленные племенные языки — прототипы (яфетические или „до-арийские“ языки, как сказал бы Н. Я. Марр), находясь в процессе непрерывного соприкосновения, взаимопроникновения и скрещения, способствовали оформлению и образованию многочисленных общностей армянского и грузинского языков. К общностям этого ряда принадлежат также исследованные выше несколько десятков общих армяно-грузинских названий животных (и птиц).